ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ներածություն

Սույն գնահատումը Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամն իրականացրել է 2017 թվականի ապրիլ-մայիս ամիսներին՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կողմից Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ իրականացվող և Եվրամիության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «Քչ Կամուրջ» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝ ամրապնդել հայաստանյան քաղաքացիական հասարակության կարողությունները, որպեսզի վերջիններս արդյունավետ ներդրում ունենան Հայաստանում որոշումների կայացման գործընթացում:

Մեթոդաբանություն

Գնահատման նպատակն էր՝ ավելի լավ պատկերացում կազմել հայաստանյան ՔՀԿ-ների կարիքների և բացերի մասին՝ կապված մասնագիտական և ոլորտային (ուղղահայաց)[1] կարողությունների հետ, ինչպես նաև նախնական տվյալներ հավաքել «Քչ Կամուրջ» ծրագրի համար: Մենք էապես շահագրգիռ ենք հասկանալու, թե ովքեր են բովանդակությունն ապահովող առաջատարները, ինչ հմտությունների են տիրապետում, պարզելու նրանց մասնագիտական կարողությունների զարգացման կարիքները: Գնահատումն իրականացվել է որակական և քանակական հետազոտության, այդ թվում՝ նյութերի ուսումնասիրության, 163 ՔՀԿ-ների շրջանում անցկացված առցանց հարցման, փորձագիտական տասնմեկ հարցազրույցի և փորձագիտական երեք խորհրդակցության միջոցով: Անդրադարձ է արվել ՔՀԿ գործունեության տասնմեկ ոլորտի, այդ թվում՝ կրթություն և հետազոտություն, առողջապահություն, սոցիալական ծառայություններ և ենթակառուցվածքներ, մարդասիրական օգնություն, երիտասարդություն, սպորտ, մշակույթ և արվեստ, սոցիալական ձեռներեցություն, կառավարություն և քաղաքացիական հասարակություն, շրջակա միջավայր և տնտեսական զարգացում: Այս ոլորտները ձևավորվել են ՏՀԶԿ կոդերի ընդհանուր ցանկի հիման վրա, հաշվի առնելով նաև «Քչ Կամուրջ» ծրագրի առանձնահատկությունները:

Դասեր նախորդ ծրագրերից

Մենք դիտարկել ենք հայաստանյան ՔՀԿ-ների համար մինչ այժմ իրականացված կարողությունների զարգացման մի շարք ծրագրեր: Եզրահանգումները ցույց են տալիս, որ դրանց մեծամասնությունը նախաձեռնվել կամ ֆինանսավորվել են միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից, և դրանք հիմնականում առնչվում են կազմակերպական զարգացման ընդհանուր կարողություններին (օրինակ ռազմավարական կառավարում, ֆոնդահայթհայթում, մարդկային ռեսուրսներ, և այլն): Ծրագրերից միայն մի քանիսն էր առնչվում մասնագիտական որոշակի ոլորտների, ինչպիսիք են՝ երիտասարդությունը, շրջակա միջավայրը, կառավարությունն ու քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաև սոցիալական ձեռներեցությունը: Բացի այդ, համաձայն հետազոտությունների ու փորձագիտական գնահատումների, առավել արդյունավետ են այն ծրագրերը, որոնցում տեղ են գտել վերապատրաստումները որոնք համադրված են եղել մասնագիտական ուղեկցմամբ և կիրառական հմտությունների բաղադրիչով:

ՔՀԿ-ների գործունեության շրջանակը

Առցանց հարցումը լրացրած ՔՀԿ-ներից շատերը դժվարացել են իրենց գործունեության առաջնային բնագավառն ընտրելու հարցում (ծրագրի տվյալների շտեմարանում գրանցվելիս նրանց մեծամասնությունը նշել է գործունեության չորս կամ ավելի բնագավառ): Այս միտումը հաստատում է այլ ուսումնասիրությունների և փորձագետների վկայություններն առ այն, որ ՔՀԿ-ները հակված են ներգրավվելու գործունեության մեծ թվով ծավալուն ոլորտներում և չեն կենտրոնանում փորձագիտական այս կամ այն ասպարեզում, ինչը թույլ կտար առավել մասնագիտացնել իրենց հմտությունները: Հետաքրքրությունների լայն շրջանակը նրանց թույլ է տալիս օգտվել ֆինանսավորման բազմաթիվ աղբյուրներից և ապահովել կայունություն՝ միաժամանակ մեղմելով բնագավառում այլընտրանքային դերակատարների պակասը: Ոլորտային ուսումնասիրությունների միջոցով ի հայտ բերված խնդիրներից մեկն այն է, որ ՔՀԿ-ներն ընդհանուր առմամբ բարձր ինքնագնահատական ունեն իրենց իսկ մատուցած ծառայությունների որակի վերաբերյալ, թեև որոշ շահագրգիռ կողմեր մատնանշում են մի շարք խնդիրներ՝ կապված այս կամ այն նեղ ոլորտում մասնագետների պակասի, ստեղծարար մոտեցումների անբավարարության և ինքնագիտակցության ցածր մակարդակի հետ: ՔՀԿ-ների ֆինանսական դժվարությունները հանգեցնում են աշխատակազմի գերբեռնվածության, իսկ մասնագիտական աճը դժվարանում է ֆինանսավորման և մասնագիտական կատարելագործման համար ժամանակի բացակայության հետևանքով:

[1] Տվյալ համատեքստում «ուղղահայաց» եզրույթը նշանակում է անդրադարձ որոշակի ոլորտային հմտություններին և կարողություններին(օրինակ կրթություն, առողջապահություն)՝ ի հակառակ «հորիզոնականի», որն անդրադառնում է ցանկացած կազմակերպության բնորոշ կազմակերպական զարգացման ոլորտներին (օրինակ կառավարում, ֆոնդահայթհայթում)՝ անկախ գործունեության բնագավառից:

ՔՀԿ-ների ուսումնական միտումները

Ուսումը՝ աշխատանքի ընթացքում

ՔՀԿ-ների ներկայացուցիչների տվյալներով՝ իրենց աշխատակազմի 74%-ը ստացել է ֆորմալ կամ ոչ ֆորմալ մասնագիտական կրթություն՝ գործունեության մասնագիտական բնագավառում: Սակայն, աշխատանքային փորձը, ինքնակրթությունը և այլ մասնագետների հետ առնչությունը ՔՀԿ-ների աշխատակազմի համար ծառայում են որպես հավելյալ և առավել մեծ տարածում ունեցող մասնագիտական զարգացման եղանակ:



Գծապատկեր 1. Ֆորմալ կամ ոչ ֆորմալ մասնագիտական կրթությունից բացի՝ ինչ միջոցներ են գործի դրվել կազմակերպությունում մասնագիտական գիտելիքները կատարելագործելու համար (%, մեկից ավելի պատասխանները թույլատրելի են)

ՔՀԿ-ների 92%-ը ցանկություն է հայտնել մասնակցելու որոշակի թեմաներով մասնագիտական կատարելագործման միջոցառումների, իսկ ՔՀԿ-ների 90%-ը նշել է, որ կցանկանար մասնակցել կրթական ծրագրերի՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների կառավարման թեմայով, ինչը վկայում է ավելին սովորելու հարցում ՔՀԿ-ների շահագրգռության մասին:

Առկա գիտելիքի ինքնագնահատում

Հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների մեծամասնությունը հիմնականում կամ լիովին բավարարված է սեփական մասնագիտական գիտելիքներով՝ ինքնագնահատման 3.6 միջին ցուցանիշով (ընդ որում, 1-ը համարժեք է անբավարարին, իսկ 5-ը՝ լիովին բավարարին):

Մակարդակը	Բավարարվածության համապատասխան մակարդակով ՔՀԿ-ների %-ը	Վերապատրաստված աշխատակազմի միջին %-ը
Բոլորովին բավարարված չեն / հիմնականում անբավարար	9	77
Մասնակի անբավարար	29	64
Հիմնականում կամ լիովին բավարար	62	78

Աղյուսակ 1. Կազմակերպության նպատակների իրագործման համար ՔՀԿ աշխատակազմի մասնագիտական գիտելիքների ինքնագնահատականի բավարարության և վերապատրաստված աշխատակազմի տոկոսային արտահայտության խաչաձև համադրում

Տվյալների վերլուծությունը ինքնագնահատականի մակարդակի և մասնագիտական վերապատրաստում անցած աշխատակազմի համամասնության միջև էական կապ ի հայտ չբերեց: Սա կարող է թույլ տալ ենթադրել, որ սեփական գիտելիքները գնահատելիս ՔՀԿ-ները հաշվի են առնում այլ գործոններ, քան ոլորտին առնչվող ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթությունն է: Գիտելիքների այլընտրանքային աղբյուրներից օգտվելու բարձր տոկոսային ցուցանիշը կարող է պարզաբանել այս երևույթը:
Ըստ փորձագիտական կարծիքների, ՔՀԿ-ներն ընդհանուր առմամբ դժվարությունների են հանդիպում փորձառու մասնագետների ներգրավելու հարցում, և ՔՀԿ-ների բազմաթիվ մասնագետներ իրենց գիտելիքն ու հմտությունները ձևավորում են աշխատանքի ընթացքում և ոլորտում կազմակերպվող վերապատրաստման ծրագրերի միջոցով: Միևնույն ժամանակ, փորձագետները բնագավառներից յուրաքանչյուրում ի հայտ են բերել բարձրակարգ կազմակերպություններ, ուստի, գործընկերային կրթության հնարավորություն առկա է բոլոր բնագավառներում, ինչը կարող է հաշվի առնվել կարողությունների զարգացման միջոցառումներ մշակելիս:

Կարողությունների զարգացման նախընտրելի ձևաչափերը

Գնահատման հարցերից մեկն ուղղված էր կարողությունների արդյունավետ զարգացման միջոցառումների նախընտրելի ձևաչափերը պարզելուն: Հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների մեծամասնությունը նախընտրությունը տվել է փորձի փոխանակման միջոցառումներին՝ հետագա խմբային վերապատրաստումներով և մասնագիտական ուղեկցմամբ, մինչդեռ առցանց վերապատրաստումների օգտին քվեարկել է հարցմանը մասնակցածների կեսից պակասը:

[2] Թեմատիկ ոլորտներից յուրաքանչյուրի կարիքները ներկայացված են հավելվածում.



Գծապատկեր 2. Մասնագիտական կարողությունների զարգացման նախընտրելի ձևաչափերը (%, մեկից ավելի պատասխանները թույլատրելի են)

Փորձագետները համակարծիք են, որ ՔՀԿ-ների շրջանում համապատասխան բնագավառներում մասնագետների միջև փորձի փոխանակման միջոցառումները մեծապես պահանջված են: Մասնավորապես, նորամուծություններ և թարմ մոտեցումներ ենթադրող միջազգային փորձառության ներկայացումը խիստ կարևոր է: Միևնույն ժամանակ, ելնելով երկրորդային տվյալներից և փորձագիտական կարծիքներից, համապատասխան բնագավառներում մեխանիզմների, գործիքների, կապերի ստեղծման գործում գործնական օժանդակությունը կարող է արդյունավետ միջոցառում լինել՝ տևական ներգործություն ունենալով ՔՀԿ-ների զարգացման հարցում:

Կարողությունների զարգացման ընդհանուր բնագավառները

Գործընկերություն՝ հանուն արդյունավետ ներգործության

Ինչպես վկայում են նյութերի ուսումնասիրությունն ու փորձագիտական խորհրդակցությունները, քաղաքականության մակարդակում ներգործություն ունենալը մարտահրավեր է՝ ծառացած գրեթե բոլոր բնագավառների ՔՀԿ-ների առջև: Հետևաբար, իրավական գիտելիքները և շահերի պաշտպանությունը ամենապահանջված հմտություններից են՝ գործունեության բոլոր ասպարեզներում: Փորձագետների կարծիքով, ցանցերն ու ոլորտային հարթակներն օգնում են ՔՀԿ-ներին՝ մոբիլիզացնել սեփական ներուժը՝ հանուն բարեհաջող շահերի պաշտպանության: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրությունները, փորձագետները և բոլոր ոլորտներում ներգրավված ՔՀԿ-ները նշել են, որ կարողությունների զարգացման ծրագրերը պետք է իրենց օժտեն այնպիսի գործիքներով, որոնք թույլ կտան ձևավորել սեփական ցանցերը տեղական և միջազգային մակարդակներում: Որոշակի ոլորտների փորձագետներ նշում են, որ համատեղ հարթակներն ու համակարգմանն ուղղված ջանքերը կնպաստեն կարողությունների զարգացման գործընկերային հնարավորությունների ընդլայնմանը և ՔՀԿ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ընդհանուր առմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մեկ այլ ոլորտ է, որում կարողությունների զարգացման հետ կապված օժանդակության ցուցաբերումն անհրաժեշտ և հնարավոր է: Օժանդակության հնարավոր թեմաներից են՝ տվյալների առցանց շտեմարանների մշակումն ու կիրառումը, առցանց կրթական ծրագրերը, ցանցերի ձևավորման և տեղեկատվության փոխանակման առցանց հարթակները, հատուկ կարիքներով անձանց օժանդակող տեխնոլոգիաները և ոլորտային այլ գործիքներ:

Սոցիալական ձեռներեցություն

Ամենատարբեր բնագավառների ՔՀԿ-ներ, որպես կարողությունների զարգացման մեկ այլ կարևոր հմտություն մատնանշել են սոցիալական ձեռներեցությունը: Հաշվի առնելով վերջերս ընդունված օրենսդրական փոփոխությունները, որոնք հասարակական կազմակերպություններին թույլ են տալիս ձեռնարկատիրական գործունեություն ծավալել, կարելի է ենթադրել, որ ձեռնարկատիրության հանդեպ վերջերս ի հայտ եկած հետաքրքրությունը կխթանվի ֆինանսական դիվերսիֆիկացիայի նոր ներուժով: Մյուս կողմից, ըստ փորձագետների, այս բնագավառում կարողությունների զարգացումը կարևոր է ոչ միայն կայունության, այլև շահառուներին ներգրավելու և նրանց սոցիալական ու տնտեսական կարիքները բավարարելու առումով:

Աշխատանքը հանրության հետ

Փորձագետները հանրային իրազեկության բարձրացումը դիտարկել են որպես հմտությունների հետ կապված բաց: Ուստի, հարկավոր է մշակել կրթական ծրագրեր՝ ուսուցանելու համար տարբեր բնագավառներում համապատասխան գործիքներով, հնարքներով և իրականացման մեթոդաբանությամբ աշխատելու հմտություններ:

Ամփոփիչ նկատառումներ

Գնահատման արդյունքներն ի հայտ են բերում մի շարք բացեր և մարտահրավերներ, որոնց իրենց գործունեության համապատասխան բնագավառներում պետք է անդրադառնան հայաստանյան ՔՀԿ-ները: Կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներն ու միջամտությունները կարող են ՔՀԿ-ներին օժտել իրենց շահառուներին ավելի որակյալ ծառայություններ մատուցելու հմտություններով: Բացի այդ, եզրահանգումներից հետևում է, որ ՔՀԿ-ները հակված են առավել պրոֆեսիոնալ գործունեության, գնահատում են փորձի փոխանակումը և սովորելու այլ հարթակները և դրանք համարում սեփական գիտելիքներն ու հմտությունները բարելավելու հնարավորություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ.
ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԸ՝ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կրթություն և հետազոտություն

Փորձագիտական առաջարկություններ	ՔՀԿ-ների մատնանշած կարիքները
• Կրթական քաղաքականության և ֆինանսավորման աղբյուրների, այդ թվում՝ պետական բյուջեից և հավելյալ, պետական կրթական քաղաքականության իմացություն. • Կրթական ծրագրերի և դրանց զարգացման չափանիշների, առարկայական ուսումնական ծրագրերի, ձեռնարկների բովանդակության իմացություն. • Հանրային հաղորդակցության հմտություններ, լսարանի ուղերձների թիրախավորում, մասնակցություն պետական քաղաքականությանը.	• Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը՝ կրթության և հետազոտության նպատակով. • Իրավական գիտելիքներ և իրավական փաստաթղթերի նախագծեր մշակելու կարողություն. • Ինտերակտիվ կրթական ծրագրեր, ոչ ֆորմալ կրթության մեթոդներ. • Ներառական կրթություն և հաշմանդամություն ունեցող անձանց կրթական իրավունքներ. • Կրթության ոլորտի ՔՀԿ-ների ցանցի ձևավորում.

Երիտասարդություն

Փորձագիտական առաջարկություններ	ՔՀԿ-ների մատնանշած կարիքները
• Կարողությունների զարգացման ծրագրեր ՔՀԿ-ների ղեկավարների համար, այդ թվում՝ առցանց հնարավորություններ. • Արդեն իսկ ներգրավված երիտասարդների հիմնական խմբի փոխարեն՝ առավել մարգինալ խմբերի ներգրավում. • Ոչ ֆորմալ վերապատրաստումներ. • ՔՀԿ-ների հետ կապված քաղաքական ուսումնասիրության ֆինանսավորման հնարավորությունների բացահայտում.	• Կամավորների ներգրավման և հետագայում նրանց աշխատանք առաջարկելու հմտություններ. • Ձեռնարկատիրական հմտություններ երիտասարդության համար. • Մարդու իրավունքների պաշտպանության և ներառական կրթության հետ կապված գիտելիքներ. • Երիտասարդության հետ աշխատելու և խորհրդատվական հմտություններ. • Երիտասարդների զբաղվածության և մասնագիտական կողմնորոշման ոլորտի գիտելիքներ. • Մարգինալ խմբերի և սահմանափակ հնարավորություններով երիտասարդների հետ աշխատանք. • Տեղական ինքնակառավարման մարմինների հետ երկխոսության հմտություններ և մասնակցություն համայնքային մակարդակում որոշումների կայացմանը. • Երիտասարդության ներառման հմտություններ և մեթոդներ. • Երիտասարդական քաղաքականություն և շահերի պաշտպանություն՝ քաղաքական մակարդակում. • Մենթորինգի և մասնագիտական ուղեկցման հմտություններ՝ երիտասարդության հետ աշխատանքի ասպարեզում.

Սպորտ

Փորձագիտական առաջարկություններ	ՔՀԿ-ների մատնանշած կարիքները
• Սպորտային զբոսաշրջության զարգացում. • Ուղեկցման և հրահանգավորման հմտություններ՝ երեխաների հետ աշխատանքում. • Ուղեկցման և հրահանգավորման հմտություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում. • Տարբեր մարզաձևերի հետ կապված վարչարարության միջազգային փորձ.	• Սպորտի խթանում երիտասարդության շրջանում, սպորտային զբոսաշրջության խթանում. • Պատանիների և չափահասների ուսուցում/հրահանգավորում. • Սպորտային զբոսաշրջության մարքեթինգ. • Ոչ ավանդական մարզաձևերի (տրիաթլոն, հանդբոլ և այլն) ներկայացում.

Արվեստ, մշակույթ և հումանիտար գիտելիքներ

Փորձագիտական առաջարկություններ	ՔՀԿ-ների մատնանշած կարիքները
• Որոշակի պրոֆիլային փորձի փոխանակում, նոր գաղափարներ, նորարարություն. • Գրական թարգմանություններ. • Արվեստի կառավարում.	• Ազգային մշակութային ժառանգության և ավանդական տոների պատշաճ ներկայացում և խթանում. • Միջոցառումների, այդ թվում՝ նոր տեսակի, օրինակ՝ շարժական ցուցահանդեսների վարում. • Արվեստի բարերարների ներգրավում, մշակութային միջոցառումների համար միջոցների հայթայթում.

Շրջակա միջավայր

Փորձագիտական առաջարկություններ	ՔՀԿ-ների մատնանշած կարիքները
• Ծրագրային թեմատիկ գնահատումներ. • Քաղաքական և իրավական կարգավորումների իմացություն. • Շրջակա միջավայրի պահպանության բնագավառի կրթական ծրագրերի մշակում և անցկացում երեխաների և երիտասարդների համար. • Կենսաբազմազանության, ջրի կառավարման, կլիմայական փոփոխություններին հարմարման խթանում.	• Էկոտուրիզմի զարգացում. • Շրջակա միջավայրի հետ կապված աուդիտ. • Օրգանական գյուղատնտեսություն. • Այլընտրանքային էներգետիկա. • Կանաչ տարածքների մոնիթորինգ. • Կանաչ տնտեսություն. • Էկոհամակարգերի ինտեգրված կառավարում.

Սոցիալական ծառայություններ և ենթակառուցվածք

Փորձագիտական առաջարկություններ	ՔՀԿ-ների մատնանշած կարիքները
• Տեխնոլոգիաների կիրառում՝ դեպքերի վարման, կարիքների գնահատման ընթացքում և սոցիալական ծառայությունների հետ կապված այլ գործերում. • Գերոնտոլոգիա, սոցիալական մանկավարժություն. • Նորարարության մեթոդների, ծառայությունների, մոտեցումների, մեխանիզմների և սոցիալական ոլորտի մեխանիզմների հետ կապված միջազգային փորձ. • Նախածննդյան դպրոցներ. • Օժանդակող տեխնիկա՝ հատուկ կարիքներով անձանց համար. • Գործընկերային փոխադարձ ծառայությունների մշակում.	• Դեպքի վարում. • Սուպերվիզիա՝ հոգեբանության բնագավառում. • Հաշմանդամություն ունեցող երեխաների ներառում. • Սոցիալական աշխատանք՝ համայնքային մակարդակում. • Ծնողավարման հմտությունների ուսուցում. • Սոցիալական պաշտպանության քաղաքականություն, գործիքներ և մեխանիզմներ. • Հոգեբանություն՝ հատուկ կարիքներով անձանց համար.

Առողջապահություն

Փորձագիտական և ՔՀԿ առաջարկություններ
• Առողջապահական քաղաքականություն և պետական ծախսեր՝ առողջապահության բնագավառում. • Հատուկ մասնագիտական թեմաներ՝ մարզերի մասնագետների համար. • Միջազգային արձանագրությունները և դրանց գործադրումը. • Երեխայի խնամք և սնուցում, դեռահասների առողջապահություն և սնուցում. • Առողջ մանկության խթանում. • Առողջապահական կրթության ծրագրեր. • Դեպքի վարում. • Առողջապահական էթիկա.

Մարդասիրական օգնություն

Փորձագիտական և ՔՀԿ առաջարկություններ

- Դեպքի վարում՝ սոցիալական աշխատողների համար.
- Արձագանք արտակարգ իրավիճակներին.
- Աշխատանք փախստականների հետ.
- Կազմակերպական զարգացում՝ խորհուրդների կառավարման, հաշվետվականության և թափանցիկության, կամավորական գործունեության կառավարման, ֆինանսավորման հայթայթման և ծրագրերի ղեկավարման ասպարեզներում.

Սոցիալական ձեռներեցություն

Փորձագիտական և ՔՀԿ առաջարկություններ

- Անհատների կողմից խմբային ֆինանսավորումը՝ (քրաուդֆանդինգ) որպես միկրոֆինանսավորման հնարավոր միջոց.
- Ֆինանսական դիվերսիֆիկացիա և հասույթների մոդելներ.
- Բիզնես-հմտություններ, բիզնես-պլանավորում, մարքեթինգ, առևտուր.
- Համայնքային կարիքների գնահատում, շուկայի գնահատում, համայնքային մոբիլիզացիա.
- Որակի հսկողություն.
- Սոցիալական ձեռնարկությունների կազմակերպում և կառավարում.
- Տուրիզմի զարգացում և մարքեթինգ.

Տնտեսական զարգացում

Փորձագիտական և ՔՀԿ առաջարկություններ

- Բիզնես-հաղորդակցություն.
- Բիզնեսի կառավարում.
- Սեղեկատվական տեխնոլոգիաները՝ տվյալ ոլորտու,մ
- Մաքսային, հարկային և այլ կանոնակարգերի հետ կապված իրավական հարցերի իմացություն.
- Վերականգնվող էներգիա, էներգետիկ աուդիտ.

Կառավարություն և քաղաքացիական հասարակություն

Փորձագիտական և ՔՀԿ առաջարկություններ

- Բռնության, խտրականության, արդարադատության մատչելիության, սոցիալական և տնտեսական իրավունքների, աշխատանքային իրավունքների, կրթական իրավունքների, առողջապահության հետ կապված քաղաքականության իմացություն.
- Իրավական փաստաթղթերի ընդունման մեխանիզմների, պետական մարմինների դերերի և պարտականությունների, հանրային մասնակցության հետ կապված դրույթների իմացություն.
- Քաղաքական փաստաթղթերի մշակում և շահերի պաշտպանություն.
- Կարիքների գնահատում, հետազոտական հմտություններ և կարողություններ.
- Հանրային-մասնավոր գործընկերություններ.
- Պետական ռազմավարության մշակման ընթացակարգեր և ստանդարտներ.

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն «ՔՀ Կամուրջ» ծրագիրը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: